

հրաւիրէին զհաւատացեալս՝ հարիւրամեկի կրկին յօրելինի հանգիսին մասնակից լինելու։ Ժամը տասնուկիսուն սկսաւ սուրբ պատարագն. հնչեց երգեհոնն նուիրական մեղեդեօք, և կը ձայնակցէին դպիրք իրենց անոյշ երգերովն։ Առաջին աւետարանէն անմիջապէս ետքը՝ ժամարար քահանայն դարձաւ առ խոնեալ բազմութիւն հաւատացեալ ժողովրդեան, և շնորհաւորելով հարիւրամեակը, համառօտիւ յիշեցուց նոյն նուիրական չէնքին պատմութիւնն ու կրած յեղափոխութիւններն. դրուատեց արժանապէս նախորդ ժողովրդապետին, Մխիթարեան Գարամուրզա Ն. Յովսէփ վարդապետին գործունէութիւնն ու աշխատանք ի վայելչութիւն սուրբ տաճարիս. և դառնալով դէպ ի սեղանն որ բազմութիւն ջահերով և ծաղկըներով զարդարուած էր « Ասոնք ամէնքն, ըսաւ, մեր հանգուցեալ ժողովրդապետին աստուածանուէր եռանդեանն և փութոյն արդիւնք են »:

ԺԳ

ԿԱՖԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԵԿԵՂԵՑԻՔ

Հայոց վերջին և մեծ գաղթականութեան համառօտ պատմութիւնն, ոչ միայն ազգայնոց՝ Թաթարաց խումբերը ճեղքելով Վոլգայի եզերքէն մինչ ի տաւրիկեան թերակղզին գալը կը յիշատակեն, այլ հարեանցի մէջ բերելով նոցա ձեռքով եղած շինութիւնքն, կը հաւատարմացնեն թէ որպիսի ընդարձակ ասպարէզ մը եղած է երկիրն՝ ընդ հուր և ընդ սուր անցած ժողովրդեան մը, իրենց բնածին